Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Դարակերտի Դ. Լադոյանի անվան միջնակարգ

Առարկա՝ Հայ գրականություն

Թեմա՝ Միջառարկայական կապերի ստեղծումը հայ գրակա-նության դասաժամերին

Վերապատրաստող, մենթոր՝ Նունե Ասրյան
Ուսուցիչ՝ Կարինե Վրեժի Կարապետյան

Երևան 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գիտությունների և արտադրության ինտեգրման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը:Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները,ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը:Դա ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից է:Միջառարկայական կապերի մասին Յ. Ա. Կոմենսկին իր «Մեծ դիտակտիկա» աշխատության մեջ նշում է,որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը.«Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները,այսինքն՝ ոչ միայն ցույց տալ,թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում,այլ նաև ցույց տալ,թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող:Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոփկապակցվածության մեջ»*:

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ,դրանք ճիշտ կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը,այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը:Օրինակ՝ բնագիտական և հումանիտար առարկաների տեսական վերլուծությունները զարգացնում են բարձր ճաշակ:Գեղեցիկը նկատելը,գեղեցիկ և գրագետ հարաբերվելը,գեղագիտորեն դաստիարակված անհատ ձևավորելը միջառարկայական կապերի խնդիրներն են:

Ուսուցման մեթոդները,ձևերն ու տեսակները հնարավորություն են տալիս ապահովելու ուսուցչի առջև դրված այս խնդիրները,ուստի ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի ուսուցման ժամանակակից մեթոդներին և կարողանա դրանք միշտ կիրառել:Ուսուցման բազմաթիվ մեթոդների շարքում հետաքրքիր են միջառարկայական կապերը:Պարապմունքը առավել հետաքրքիր է և արդյունավետ,երբ մի առարկան «համագործակցում» է մյուսի հետ:

Հանրակրթության իրականացումը հարափոփոխ գործընթաց է:Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան այսօր մեծանում է առարկաների միջև կապերի բացահայտումը:Այն ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կհարստանան և կընդլայնվեն սովորողների գիտելիքները:Իսկ դրան կարող

են նպաստել միջառարկայական կապերը:Հենց միջառարկայական կապերի շնորհիվ է աշակերտների մոտ զարգանում ճանաչողական ակտիվությունը:Միջառարկայական կապեր ստեղծելը ուսուցչի բազմակողմանի զարգացվածության և տրամաբանական կարողությունների շնորհիվ է կատարվում,իսկ յուրաքանչյուր ուսուցչի պարտավորությունն է զարգացնել աշակերտի տրամաբանությունը,երևակայությունը և հետաքրքրասիրությունը:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Մեր ժամանակների կարևորագույն առանձնահատկություններից է տարբեր գիտությունների գաղափարների և մեթոդների ինտեգրումը:Ներկայումս կան բազմաթիվ խնդիրներ,որոնք կապված են հասարակության և տարբեր բնագավառների հարաբերությունների հետ:Նրանց միջև գոյություն ունեցող կապերը վերլուծելիս զուգորդվում են գրականությունն ու պատմությունը,գրականությունն ու հոգեբանությունը,գրականությունն ու արվեստի տարբեր ճյուղերը և այլն:

Միասնական գիտական աշխարհայացքի համար անհրաժեշտ է հաշվի առնել միջառարկայական կապերը:Դրանք ժամանակի դպրոցական կրթության կարևորագույն սկզբունքներն են, նպաստում են սովորողների գիտելիքների համակարգմանը և ուսումնադաստիարակչական գործընթացի միասնականացմանը:Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը,բազմակողմանի զարգացմանը,ինտելեկտի կատարելագործմանը,մտահորիզոնի ընդարձակմանը:Այդ պատճառով հանրակրթական դպրոցում աշխատող յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է ոչ միայն գերազանց տիրապետել իր մասնագիտությանը,այլև որոշակի ինֆորմացիոն պաշարներ ունենալ նաև հարակից առարկաներից:Գաղտնիք չէ,որ հայ գրականության ցանկացած դաս անհնար է կազմակերպել առանց միջառարկայական կապերի,ուստի գրականության ուսուցիչն անընդհատ ինքնազարգացման մեջ պետք է լինի:

Միջառարկայական կապեր իրականացնելու համար ուսուցիչը ձևերի,մեթոդների և հնարների մեծ ընտրություն ունի:Այս դեպքում կարևոր են սովորողների տարիքային առանձնահատկությունները և պատրաստվածության աստիճանը հաշվի առնելը:

Ցանկացած որակյալ դասի էական հատկանիշներն են ամբողջականությունն ու կազմակերպական հստակությունը,բոլոր տարրերի ամուր կապն ու որոշակի թեմատիկ ու կառուցվածքային ավարտվածությունը:Այս ամենը կախված է թե՛ ուսուցչի,թե՛ աշակերտների պատրաստվածությունից:Որակյալ դասի բնորոշ գիծ է դրա արդյունավետությունը,այսինքն սովորողների կողմից հիմնական նյութի յուրացումը դասարանում,դասի ժամանակ,ուսուցանվող նոր նյութի համակցումը ունեցած գիտելիքներին և դասի ընթացքում աշակերտների նախապատրաստումը հետագա ինքնուրույն աշխատանքներին:

Որակյալ դասը բնութագրվում է նաև ուսուցչի և սովորողների համատեղ ու ստեղծագործական աշխատանքի սերտ փոխներգործությամբ,որի հիման վրա կարելի է հասնել գլխավոր խնդրի լուծմանը՝ սովորեցնել,դաստիարակել,զարգացնել:

«Հայ գրականությունը» այնպիսի առարկա է,որի դասավանդման ժամանակ միջառարկայական կապեր կարող ենք ստեղծել հանրակրթական դպրոցներում դասավանդվող գրեթե բոլոր առարկաների հետ,որոնք աշակերտների մեջ ձևավորում են ինտելեկտ և նոր արժեհամակարգ:

Միջառարկայական կապը ուսուցման այն ձևն է,երբ զուգահեռներ են անցկացվում երկու տարբեր առարկաների միջև:Հայ գրականության դասավանդման ժամանակ,պայմանավորված ուսուցանվող նյութով,կարելի է ստեղծել տարբեր միջառարկայական կապեր:Օրինակ՝ կարող են զուգահեռներ անցկացվել հետևյալ մոտեցումներով՝



Հիմա հերթով անդրադառնամ վերոնշյալ առարկաների հետ հայ գրականության դասաժամերին ստեղծվող միջառարկայական կապերին:

«Հայոց լեզուն» և «Հայ գրականությունը» սերտորեն առնչվող առարկաներ են,արտահայտվում են մեկը մյուսով:Լեզուն մարդկային հաղորդակցման հիմնական և ամենակարևոր միջոցն է:Այն օգնում է բառերի և նախադասությունների ճիշտ համակցումով արտահայտել մտքերը,գաղափարները,զգացմունքներն ու հույզերը:Հայոց լեզվի կարևորությունը հատկապես մեծ է հայ գրականության դասաժամերին,որովհետև լեզուն արտացոլում է մարդու մտածողությունը:Երբ այս կամ այն բառը,արտահայտությունը ճիշտ ու տեղին չի գործածվում,տուժում է միտքը:Հետևաբար շատ կարևոր է կարողանալ մտքի և արտահայտության միջև ուղիղ և ներդաշնակ կապ ստեղծել:Ծարահյուսական յուրօրինակ կառույցները,բառակազմական պատկերները,արմատական ստուգաբանությունները կարող են անմիջական ներգործություն ունենալ հայ գրականության դասավանդման ընթացքում՝ ապահովելով միջառարկայական կապը հայ գրականության և հայոց լեզվի միջև:

«Հայ գրականություն» և «Հայոց պատմություն»,«Համաշխարհային պատմություն» առարկաների միջև միջառարկայական կապ կարելի է ստեղծել տարբեր նյութերի ուսուցման ժամանակ,օրինակ՝ գրողի ապրած ժամանակաշրջանը,ստեղծագործություններում արտացոլված պատմական կերպարները,,դարաշրջանները ներկայացնելիս:

Պատմության կապը գրականության հետ առավել ցայտուն է դառնում պատմավեպեր ուսուցանելիս:Յուրաքանչյուր պատմավեպի ուսուցման ժամանակ ուսուցիչը նախ պետք է աշակերտներին բացատրի պատմավեպի հիմքում ընկած պատմական ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակը,պատմական միջավայրի առանձնահատկությունները:Այնուհետև,նշելով պատմական այն սկզբնաղբյուրները,որոնցից օգտվել է հեղինակը,ուսուցիչը պետք է բացատրի,որ պատմավեպ գրելիս գրողը,ինչպես մի առիթով նշել է հայ մեծ վիպասան Մուրացանը,չպետք է դառնա պատմական փաստերի պատճենահանողը:Գրողը,հենվելով պատմիչների արձանագրած պատմական փաստերի վրա,պետք է ստեղծագործական երևակայության արդյունքում ստեղծի գեղարվեստական ստեղծագործություն,որտեղ կարող են առկա լինել սյուժետային այնպիսի դրվագներ,որոնք չկան պատմական վկայություններում:Պատմական հերոսները,թրծվելով գրողի ստեղծագործական երևակայության քուրայում, դառնում

են գեղագիտորեն,հոգեբանորեն ավելի ընդգծուն գեղարվեստական կերպարներ:Պատմական փոքրիկ փաստը կարող է գրողի մոտ դառնալ առավել խորը պատկերային միջավայր,որտեղ հերոսների ներաշխարհը,հույզերը,հոգեբանական բարդ անցումները առավել խորությամբ են բացահայտում հերոսի մարդկային նկարագիրը,աշխարհայացքը,նրա արժեհամակարգը:

Բերեմ «Հայ գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաների միջառարկայական կապի մի օրինակ:«Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը ուսուցանելիս ուսուցիչը անպայման անդրադառնում է հայոց պատմությանը՝ ներկայացնելով պատմական ժամանակաշրջանը (8 – 10-րդ դդ.),արաբական արշավանքները Հայաստան և նրանց հարկային քաղաքականությունը,հայերի ազատատենչությունը,Բագրատունյաց արքաների գահակալությունը:Այստեղ կարելի է օգտագործել «Т-աձև աղյուսակ»,«ԳՈՒՍ» մեթոդները՝

Հայ գրականություն	Հայոց պատմություն
Ստեղծվել է «Սասունցի Դավիթ» Էպոսը:	Արաբական ցեղերը հնագույն ժամանակներից բնակվում էին Արաբական թերակղզում:
Արտացոլված է արաբական հարկային քաղաքականությունը	640թ. արաբները Բաղեշի լեռնանցքով առաջին անգամ ներխուժեցին Հայաստան և հոկտեմբերի 6-ին գրավեցին մայրաքաղաք Դվինը:642-643թթ. արաբները 2-րդ անգամ ներխուժեցին Հայաստան
Այդ ժամանակաշրջանը ներկայացված է նաև Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում	Գահակալում էին Բագրատունիները

Գրականությունը սերտորեն առնչվում է նաև փիլիսոփայության հետ:Ավելին,դրանք,լինելով միևնույն իրականության ճանաչման տարբեր ձևեր, փաստորեն փորձում են նույն էությունը ըմբռնել,հասկանալ,մեկնաբանել ու բացատրել տարբեր միջոցներով՝ փիլիսոփայությունը տրամաբանական-ռացիոնալ հացկացությունների,իսկ գրականությունը գեղարվեստական պատկերների միջոցով:Ուստի ցանկացած դարի ու դարաշրջանի գրականություն հասկանալու համար առնվազն պետք է բավարար չափով գիտենալ տվյալ ժամանակաշրջանի փիլիսոփայությունը,և ընդհակառակը՝ անհնար է հասկանալ որևէ երկրի և ժամանակաշրջանի փիլիսոփայություն,առանց ծանոթանալու տվյալ երկրի ու ժամանակաշրջանի գրական կարևորագույն ստեղծագործություններին:Հայ գրականության և փիլիսոփայության միջառարկայական կապ կարելի է ստեղծել շատ հաճախ,օրինակ՝ «Գ. Նարեկացի»,«Գրական ուղղություններ» թեմաները ուսուցանելիս:Գ. Նարեկացուն կարելի է բնութագրել հետևյալ տեսանկյուններից՝



Գրականությունը սերտ աղերսներ ունի հոգեբանության հետ:Հասարակական հարաբերությունների զարգացման արդի փուլում լուրջ նշանակություն է տրվում հոգեբանության ուսումնասիրությանը:Գրականության և արվեստի այլ ճյուղերի մեջ՝ իբրև գիտական խնդիր,առավել մեծ տեղ է տրվում այս բնագավառին,քանի որ վերջինիս ուշադրության առարկան մարդն է իր ներաշխարհային ողջ հարստությամբ:Հիշյալ ոլորտներում (մասնավորապես գրականության) հոգեբանական դիտարկումները կատարվում են 3 ուղղությամբ՝

1. ստեղծագործողի հոգեբանություն(գրողի անձը,անհատականությունը,կենսագրու-թյունը),

2. ստեղծագործության հոգեբանություն (գրական ստեղծագործությունը՝ իբրև գեղարվեստական մտածողության գործընթաց),

3. ստեղծագործության ընկալման հոգեբանություն(գրական երկի ազդեցությունը ընթերցողի,ունկնդրի վրա):

Առաջին և երկրորդ մոտեցումների առարկան գրողն է,երրորդինը՝ ընթերցողը:Հոգեբանական կապն այստեղ փոխադարձված է:Գրողի հոգեբանական գիտակցությունը ուղղված է ընթերցողին,ընթերցողինը՝ գրողին:Նույնը կարելի է ասել նաև ստեղծագործության հերոսների և ընթերցողների մասին:

Գաղտնիք չէ,որ գրական երկերը ստեղծված են արտացոլելու հասարակական կյանքն ու երևույթները:Հետևաբար հայ գրականության դասաժամերին շատ կարևոր է ստեղծել միջառարկայական կապ «Հասարակագիտություն» առարկայի հետ:Հասարակագիտություն բառի կազմությունը ներառում է «հասարակություն» և «գիտություն» բառերը և նշանակում է գիտություն հասարակության մասին:Հասարակությունը,հանդիսանալով մարդկանց ամբողջություն,ենթադրում է,որ հասարակագիտության ուսումնասիրության առարկան իր մեջ ընդգրկում է նաև մարդուն առնչվող մի շարք հիմնահարցեր:Այն կարելի է համարել նաև գիտություն մարդու կյանքի մասին:Գրական հերոսների,գրողների կերպարները լիարժեք դարձնելու համար պետք է նրանց դիտարկել որպես հասարակության անդամ:Անհրաժեշտ է ցույց տալ տվյալ ժամանակաշրջանի հասարակության անմիջական ազդեցությունը գրողի կամ գրական հերոսի կերպարի ձևավորման վրա և հակառակը:

գրող,
գրական հերոս → **հասարակություն**
հասարակություն → **գրող, գրական հերոս**

Գրականության դասաժամերին շատ հաճախ ենք անդրադառնում քրիստոնեական կրոնին,հոգևոր հայրերին,Հայ առաքելական եկեղեցուն,եկեղեցական տոներին՝ այսպիսով ստեղծելով միջառարկայական կապ «Հայ գրականություն» և «Հայոց եկեղեցու պատմություն» առարկաների միջև:«Կորյուն»,«Մ. Մաշտոց»,«Ագաթանգեղոս»,«Փ. Բուզանդ»,«Եզնիկ Կողբացի»,«Գ. Նարեկացի» և շատ այլ թեմաների ուսուցման ժամանակ միջառարկայական կապի ստեղծումը«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հետ անխուսափելի է:

Նույն կերպ կարելի է հանգիստ խոսել «Հայ գրականության»

և«Աշխարհագրության» ակնհայտ կապի մասին:Գրողների կենսագրությունը ուսուցանելիս անպայման անդրադառնում ենք նրանց ծննդավայրին,խոսում տեղանքի,աշխարհագրական դիրքի մասին՝ ստեղծելով միջառարկայական կապ երկու առարկաների միջև:Ստեղծագործությունները ուսուցանելիս պարզում ենք,թե որտեղ են տեղի ունենում դեպքերը,ինչով են հայտնի երկերում նշված տեղանունները:Ստացվում է,որ «Հայ գրականության» դասաժամերին համարյա միշտ կարելի է միջառարկայական կապ ստեղծել «Աշխարհագրություն» առարկայի հետ:Օրինակ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրելիս օգտվել քարտեզից,որտեղ ներկայացված են բոլոր այն քաղաքներն ու գավառները,որտեղ եղել է Մաշտոցը:

Կերպարվեստը արվեստի ճյուղ է,որը սերտորեն առնչվում է արվեստի մյուս՝ ավելի հարուստ ճյուղի՝ գրականության հետ:Գրականությունը այնպիսի արվեստ է,որը կարելի է «տեսանելի» դարձնել՝ օգտագործելով նյութի ընձեռած հնարավորությունը: Հայ գրականության շատ երկեր գրված են «բառային նկարչության» գեղարվեստական հնարով,ինչը հնարավորություն է ընձեռում ստեղծել «Հայ գրականություն» և «Կերպարվեստ» առարկաների միջև միջառարկայական կապ:Կան պատկերավոր ստեղծագործություններ,որոնց յուրաքանչյուր հատվածը,քառատողը,անգամ միտողը,բառակապակցությունը կամ նախադասությունը կարելի է արտահայտել,վրձնել,պատկերել նկարներով:Օրինակ՝ Մ. Սարյանի «Իմ հայրենիքը»,«Հայաստան»,Մ. Ավետիսյանի «Ջաջուռ»,«Գյուղը»,Գ. Խանջյանի «Հայոց այբուբենը»,«Ավարայր» կտավները՝ որպես դիտակտիկ նյութ,կարելի է օգտագործել հայրենասիրական բնույթի երկեր ուսուցանելիս:



Մ. Սարյան «Հայաստան»



Մ. Ավետիսյան «Ձաջուռ»

Նմանատիպ ձևով կարելի է աշակերտներին ներկայացնել համաշխարհային ճանաչում ունեցող նկարիչների կտավները՝ զուգակցելով դրանք հայ գրականության համապատասխան թեմաներին:Օրինակ՝ Գ. Նարեկացու ստեղծագործությունները ուսուցանելիս կարելի է սովորողներին ներկայացնել Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզա»,Ռաֆայել Սանտիի «Ալբայի Տիրամայրը»,«Սիքստինյան Տիրամայրը» աշխարհահռչակ կտավները:

Լեոնարդո դա Վինչի «Մոնա Լիզա» Ռաֆայել «Սիքստինյան Տիրամայրը»

Արվեստի երկու ճյուղերը՝ կերպարվեստն ու գրականությունը,իրար միահյուսելով՝ հայ գրականության դասաժամերն առավել պատկերավոր կարելի է դարձնել,ինչպես նաև սովորողների մեջ կարելի է ձևավորել բարձր գեղագիտական ճաշակ:

Երաժշտությունը բացառիկ երևույթ է, մշակույթի ամենանուրբ,միևնույն ժամանակ՝ ամենաազդեցիկ ոլորտներից մեկը:Գրականությունն ու երաժշտությունը արվեստի՝ իրար շատ հարազատ տեսակներ են:Գրականության և երաժշտության «լեզուների» զարգացման օրինաչափությունները նման են իրար:Դրանց մեջ ընդհանուր տարրեր կան՝ ռիթմը,շեշտը,կարճ և երկար վանկերը խոսքի մեջ,տևողությունները,արագ և դանդաղ տեմպերը,ձայներանգը,հնչերանգը երաժշտության մեջ:Առանց գրականության չէին լինի այնպիսի երաժշտական ժանրեր,ինչպիսիք են երգը,ռոմանսը,օպերան,կանտատը և երգչային այլ ստեղծագործություններ:Երաժշտության և գրականության միասնությունից շահում է այդ առարկաներից յուրաքանչյուրը:Հայ գրականության շատ գրողների բանաստեղծություններ վեր են ածվել երգերի,հետևաբար անհրաժեշտ է նաև դասարանում լսել այդ երգերը՝ համեմատելով արվեստի երկու ճյուղերը:

Հայ գրականության դասաժամերին հեշտությամբ կարելի է միջառարկայական կապեր ստեղծել բնագիտական առարկաների հետ (ֆիզիկա,քիմիա,կենսաբանություն):Գրական երկերը ուսումնասիրելիս հաճախ հանդիպում ենք այնտեղ տեղ գտած ֆիզիկական երևույթների նկարագրությունների (անձրև,քամի,երկրաշարժ և այլն):Տրամաբանական է և անհրաժեշտ բացատրել ֆիզիկական երևույթները,ստեղծել միջառարկայական կապեր բնագիտական առարկաների հետ:Կենսաբանության հետ ևս կարելի է հեշտությամբ ստեղծել միջառարկայական կապ՝ գրական երկերում տեղ գտած բնապատկերները ուսուցանելիս:

Որքան էլ զարմանալի հնչի,բայց հայ գրականության դասաժամերին կարելի է հետաքրքիր միջառարկայական կապեր ստեղծել մաթեմատիկական առարկաների հետ:Մեծ Գալիլեյը ասում էր.«Բնության ոսկե գիրքը գրված է մաթեմատիկայի լեզվով:Եվ որպեսզի կարդանք այդ գիրքը,պետք է իմանանք մաթեմատիկայի լեզուն»:Արդյո՞ք Գալիլեյի նշած բնությունը միայն բնական գիտությունների ուսումնասիրության առարկան է:Իսկ արվե՞ստը:Չէ՞ որ այն նույնպես աշխարհի ու բնության իմացության ձև է,և պետք է սպասել,որ մաթեմատիկական լեզուն կարող է

կիրառություն գտնել նաև իմացության այս ոլորտում,հետևաբար նաև գրականության մեջ:Մաթեմատիկան կարող է ճանապարհ գտնել հասկանալու գրական ստեղծագործությունը,գտնել այն գնահատելու ինչ-որ չափանիշներ:Եվ գրական ստեղծագործության նկատմամբ նման մոտեցումը հնարավոր է դառնում առաջին հերթին համաչափության գաղափարի ներգրավմամբ:Գրական ստեղծագործության մեջ համաչափություններ ստեղծելու գործում մեծ դեր է խաղում բարոյահոգեբանական գործոնը:Այստեղ համաչափությունը ստեղծվում է կերպարների միասնության և հակադրության միջոցով:Միասնության համար հիմք են ծառայում գեղեցիկի,բարու նկատմամբ մարդկային բնական մղումը,զգացմունքների,մտածողության և շահերի ընդհանրությունը:

Գրական ստեղծագործության գաղափարը իրագործելու համար հեղինակը սյուժեում օգտագործում է կերպարներ և ստեղծում զանազան համաչափություններ այդ կերպարների միջև:Այստեղ համաչափությունը ստեղծվում է կերպարների միասնության և հակադրության միջոցով:

Ստեղծագործության դիպաշարը այն առաջին և առանցքային ազդակն է,որի վրա հյուսվում է գրական ստեղծագործությունը:Այն հնարավորություն է տալիս հայելային համաչափությամբ աշխարհի,կյանքի ինչ-ինչ իրադարձություններ արտապատկերել որպես գրական ստեղծագործություն:Սակայն այդ համաչափությունը ձևական-երկրաչափական չէ:Այսինքն՝ իրական կյանքի նույնական պատկերումը չէ,անգամ եթե նրա հերոսները իրական են կամ պատկերվող իրադարձությունները երբևէ կատարվել են:Այդ համաչափությունը խորքային հանրահաշվական է:Հեղինակը այդ սյուժեով իրականացնում է իր գաղափարը,բերում իր ասելիքը,ինչը շատ ավելին է,քան կատարված մեկ կամ մի քանի իրադարձության նկարագրությունը:Այստեղ համաչափության ստեղծած արտապատկերը կարող է լինել նաև բնության,կյանքի նկարագրությունը,որում կարող են հանդիպել սովորական դիտողի աչքի համար ոչ տեսանելի պատկերներ ու զգացողություններ,համեմատություններ,որոնք արդեն ինքնին համաչափություններ են՝ մարդկային հոգեվիճակի նկարագրություններ ու պատկերումներ և գեղարվեստական խոսքի այլ հնարքներ:

Ահա բնության պատկերների նկարագրության հրաշալի օրինակ Հովի. Թումանյանի «Մարոն» պոեմից՝

Մեր գյուղն էն է,որ հըպարտ,
Լեռների մեջ միգապատ,
Խոր ձորերի քարափին՝

Ձեռը տըված ճակատին՝
Միտք է անում տըխրադեմ.
Ի՞նչ է ուզում՝ չըգիտեմ...

Վերոնշյալ հատվածում,ինչ խոսք, հրաշալի են ներկայացված երկրաչափական համաչափությունները:Գրական ստեղծագործության մեջ կատարված անակնկալ և անսովոր համեմատությունները,ստեղծելով որոշակի համաչափություններ,գեղագիտական առանձին արժեք են տալիս ստեղծագործությանը:Նման հրաշալի համեմատություն է կատարված Հովի. Թումանյանի մոտ՝

Ամպերը դանդաղ,ուղտերի նման՝

Նոր են ջուր խմած ձորից բարձրանում...

Մաթեմատիկական գիտելիքների կարևորությունը գիտակցելով՝ մենք՝ ուսուցիչներս,փորձում ենք դասապրոցեսն օգտագործել հնարավորինս արդյունավետ:Արդյունավետությունը բարձրացնելու համար օգտագործում ենք տարբեր մեթոդներ,սակայն ժամանակի հետ պահանջվում է դասին տալ ավելի արդիական բնույթ:

Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը հայ գրականության դասաժամերին արդյունավետ են,մանավանդ որ աշակերտները ավելի արագ ու հեշտ են տիրապետում ՏՀՏ-ների կիրառմանը:Այսպիսով՝ «Հայ գրականություն» և «Ինֆորմատիկա» առարկաների միջև հեշտությամբ կարելի է ստեղծել միջառարկայական կապ:Դասաժամերին ՏՀՏ-ների կիրառումը ուժեղացնում է աշակերտների մոտիվացիան,հնարավորություն է տալիս օգտագործել թարմ տեղեկատվություն,խնայել ժամանակը,լսարանային կամ անհատական պարապմունքները դարձնել ավելի հետաքրքիր,ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահեստ:

Ավարտելով իմ հետազոտական աշխատանքը՝ ուզում եմ ևս մեկ անգամ նշել,որ հագեցած ու բովանդակալից դաս ունենալու համար անհրաժեշտ է ստեղծել միջառարկայական կապեր:Իսկ «Հայ գրականություն» առարկան ուսուցչին միջառարկայական կապեր ստեղծելու անսպառ հնարավորություն է ընձեռում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Միջառարկայական կապերի ստեղծումը հայ գրականության դասաժամերին» հետազոտական թեման՝ հասկանալի դարձավ,որ գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ,մեկը մյուսի համար հիմք և ելակետ կարող է լինել:Հետևաբար աշակերտներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի,ընդարձակ տեղեկություններ տալը ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը,դրանք շրջանառության մեջ պահելը,կարևոր ու վճռող նշանակություն ունեն աշակերտների աշխարհաճանաչման համար:Եվ դրա միջոցով զարգանում է երեխաների մոտ ճանաչողական ակտիվությունը,երևակայությունը:Նրանք սովորում են քննարկումներ և հարցազրույցներ վարել,պնդել իրենց տեսակետը,փաստարկներ բերել:Դրանով նաև աշակերտը հասնում է ամբողջական ընկալման,տարբեր բնագավառներից գիտելիքների,փաստերի ու գաղափարների համադրման,իմաստավորման ու գնահատման:Դրանք խթանում են սովորողների ճանաչողական,ստեղծագործական գործունեությանը:Իսկ քանի որ այս ամենը կապված է գրականության հետ,այն ուսուցչի ինքնազարգացման միջոց է,իսկ աշակերտի համար ձևավորում է վերլուծական միտք,բացահայտում գեղեցիկը և դրականը արագ ընկալելու հնարավորություններ՝ ստեղծելով գեղագիտական (էսթետիկ) մտածողություն:Իսկ գեղագիտական մտածողությունը հարուստ ներաշխարհի գրավականն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յ. Ա. Կոմենսկի,«Մեծ դիտակտիկա»,«Զանգակ»,2010թ.
2. Յ. Ամիրջանյան,«Մանկավարժություն»,Երևան,2022թ.
3. Ս. Մանուկյան,«Մանկավարժական և աշակերտական դասանպատակները», Երևան,2003թ.
4. Ս. Արզումանյան,«Հոգեբանություն»,Երևան,2003թ.
5. Կ. Ալեքսանյան,«Աշխարհագրությունը և գրականությունը»,Երևան,2008թ.
6. «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդես, թիվ 3,2016թ.
7. «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գրական հանդես, թիվ 5,2016թ.
8. «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» գիտական հանդես, թիվ 3,2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 1

Միջառարկայական կապերի ստեղծումը հայ գրականության դասաժամերին 2

Եզրակացություն 13

Օգտագործված գրականություն 14

Օրվա դասի պլան-կոնսպեկտ

Դասարան - VII

Առարկան -Գրականություն

Դասի թեման- Եղիշե Չարենցի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

Դասատիպը - Նոր յութի յուրացման դաս

Նպատակներ Իմանան

- ✓ Չարնցի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
- ✓ Չարենցի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի վերաբերյալ պատկերացում կազմեն
- ✓ Չարենցի իսկական անունն ու գրական կեղծանվան առաջացման վարկածներ
- ✓ Չարենցի մահն ու կարծիքներ հեղինակի մասին

Վերջնարդյունք

- ✓ Տեղեկատվական տեքստի հետ աշխատելու,նոր նյութը յուրացնելու կարողունակություն
- ✓ Գեղագիտական ճաշակի զարգացում
- ✓ Ճանաչեն Չարենցին՝ որպես գրող և անհատ
- ✓ Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն:

Խաչվող հասկացություններ_

- ✓ Ժամանակ և տարածություն.գրողի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջան
- ✓ Անհատ և հարաբերություններ
- ✓ Պատճառ և հետևանք.<<Պատգամ>>,<<Գիրք ճանապարհի>> ստեղծագործությունները որպես պատճառ,հետևանքը ՝ բանտարկություն և հալածանք

Անհրաժեշտ պարագաներ-Նկարներ՝ Չարենց,Կարս,համակարգիչ,քարտեզ,հեռախոս

Միջառարկայական կապեր-Պատմություն,Աշխարհագրություն,Արվեստ, ՏՀՏ,Հասարակագիտություն,Ֆրանսերեն

Մեթոդներ- Մտագրոհ,5 րոպեանոց շարադրանք,Հեղինակի աթոռ,Քառաբաժանում

ՀՊՉ -Հ1,Հ2,Հ15,Հ25,Հ26,Հ29,Հ30,Հ45

Դասի ընթացքը

Խթանում -Սովորողների ուշադրությունը հրավիրել Եղիշե Չարենցի նկարներին և

ձեռագրին:Մտագրոհի միջոցով սովորողների ուշադրությունը կենտրոնացնել հեղինակին,բացահայտել նրանց նախնական գիտելիքները հեղինակի և նրա ստեղծագործությունների մասին

Նոր նյութի հաղորդում -ներկայացնել Չարենցի կենսագրական տվյալներ,իսկական անուն-ազգանունը,առաջարկել կանխագուշակել Չարենց գրական կեղծանվան ծագումն ու նշանակությունը:Լսել բոլորի տեսակետները:ՏՀՏ կիրառությամբ ցուցադրել Կարս քաղաքի քարտեզ,Չարենցի տունը Կարսում՝ ապահովելով միջառարկայական կապ աշխարհագրության հետ,նա եղել է Վանում,Տրապիզոնում,Մոսկվայում,Փարիզում,Վենետիկում:<< Մի ճրագ մթնում>> ֆիլմից հատվածի դիտում,որտեղ կա հեղինակի բանաստեղծությունների ասմունք,QR կոդով լսել Projekt La նախագծի երգը նրա բառերով երգ,այսպիսով ստեղծել միջառարկայական կապ արվեստի տարբեր ճյուղերի հետ: :Չարենցի ապրած ժամանակաշրջանը և մահը ներկայացնելիս ստեղծել միջառարկայական կապ պատմության հետ՝ Ստալինյան բռնություններ:

Ուղղորդված գործնական աշխատանք_ Հանձնարարել գրել հարցեր՝ ուղղված հեղինակին

Ինքնուրույն աշխատանք/իմաստավորում -Հեղինակի աթոռ մեթոդով ամրապնդել ստացած գիտելիքները:

Կշռադատում,անդրադարձ-քառաբաժանում մեթոդով

Ի՞նչ գիտեի:	Ի՞նչ նոր իմացա:
Ինչո՞վ է այն օգտակար և ուսանելի:	Ի՞նչ եզրակացություն արեցի:

Գնահատում-ձևավորող

Տնային աշխատանք-կազմել հեղինակի կենսագրության ժամանակագրական քարտեզ, համացանցից գտնել և ներկայացնել հետաքրքիր փաստեր՝ նամակներ,կարծիքներ և այլն,Չարենցի,Կարսի մասին /թվային և մեդիա կարողունակություն